ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԵՐՏԱՎԱՐԱԳՈՒՅՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ CBA-2026-075 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ № 1

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների ապահովման համար՝ շերտավարագույրի մատակարարման CBA-2026-075 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է 30.10.2026թ. դրությամբ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը՝

1. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հնարավո՞ր է արդյոք տրամադրել հրավերով նախատեսված գլանային և ուղղահայաց շերտավարագույրների նախահաշվային գների արժեքներն առանձին՝ յուրաքանչյուր տեսակի համար:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Գնման առարկան ներառված է մեկ չափաբաժնում, որի համար հրավերով սահմանված է մեկ ընդհանուր նախահաշվային գին: Մասնակիցը կարող է իր հայեցողությամբ բաշխել ընդհանուր գինը գլանային և ուղղահայաց շերտավարագույրների միջև՝ հաշվի առնելով հրավերով սահմանված յուրաքանչյուր տեսակի ապրանքի քանակները: Գնային առաջարկը ներկայացվում է մեկ չափաբաժնի համար՝ մեկ տողով՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկի Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝
Սիրան Եգանյան
Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ